ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

10 հուլիսի հինգշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

93
(3124)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԵՐՕՐՅԱ «ՇՄԱՅՄՆԵՐ»-Ը ԿԱՄ ՔՊ-Ի ՋԱՐԴԱՐԱՐՆԵՐԸ

Հուլիսի 8-ը դեռ երկար կհիշվի քաղաքական պատմության մեջ նրանով, որ ընդդիմադիր պատգամավոր Արթուր Սարգսյանին ոչ միայն կալանավորեցին, այլեւ իշխանությունը նրան դաժան ծեծով ճանապարհեց կալանավայր:

Իսկ ովքեր էին իշխող «Քաղպայմանագրի» ջարդարարները եւ ինչով են նրանք հանրությանը հայտնի:

Վեճը հրահրեց Վահե Ղալումյանը՝ Արթուր Սարգսյանի հետ կռվի բռնվելով դռների մոտ, իսկ Արեն Մկրտչյանն ու Արսեն Թորոսյանը Տիգրան Պարսիլյանի հետ Գեղամ Մանուկյանին սկսեցին հարվածներ հասցնել: Հետո միացավ «Ռեմբոյի» կերպարի մոտիվներով հայտնի ձկնգող Նարեկ Գրիգորյանը, որն ակնհայտորեն աջուձախ բոլորին ոտքով, ձեռքով հարվածներ էր հասցնում: Կարճ ասած՝ մարտ՝ առանց կանոնների:

Այսպիսով՝ ով ով է:

Վահե Ղալումյան - հուլիսի 8-ի կռվի սադրիչը: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի՝ Նիկոլ Փաշինյանի քավորի եղբայրն է: Նա 2019 թվականին ունեցած իր ֆինանսները չէր հայտարարագրել, բայց ներվեց կոռուպցիայի դեմ պայքարող Փաշինյանի կողմից:

Արեն Մկրտչյան - Երգիծական «Ք1» հաղորդաշարերի սցենարիստ, Նիկոլ Փաշինյանի նախկին օգնական, Ալավերդու չընտրված քաղաքապետ: Հուլիսի 8-ի ծեծկռտուքից հետո աջ ձեռքը չէր կարողանում շարժել. ենթադրաբար կոտրվածք ունի:

Արթուր Հովհաննիսյան - ԱԺ ՔՊ խմբակցության քարտուղար, նախկին լրագրող: 2017 թվականի նոյեմբերի 28-ին նրա Nissan March մակնիշի ավտոմեքենայից խուզարկությամբ հայտնաբերվել էր 0.24 գրամ կշռով դեղնականաչավուն զանգված: Արթուր Հովհաննիսյանը, լինելով երեւանաբնակ, բնակարանի վարձի գումար է ստացել պետությունից, իսկ 2020 թվականի հոկտեմբերի 20-ին, N «80-Ա» հրամանով, բնակարան է ձեռք բերել Երեւանի Ադոնցի փողոցի 19/8 հասցեում կառուցվող բազմաբնակարան համալիրում: Ընդդիմադիր գործիչների «լեզուն», «ականջը» կտրելու սպառնալիքներով հայտնի անպատիժ պաշտոնյա:

Ռուստամ Բաքոյան - ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի փոխնախագահ, որը խեղդում էր ընդդիմադիր պատգամավոր Արգիշտի Գեւորգյանին: Բաքոյանը աչքի է ընկել նաեւ իր քաղաքացիական կնոջ նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերով եւ հայհոյախառն այլ թեմաներով:

Տիգրան Պարսիլյան - Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի անդամ, որին վերագրվում է հայհոյախոս պատգամավորի համբավը. աթեիստ է, աչքի է ընկնում ագրեսիվ վարքով բոլոր տեսակադրերում: Առաջինը հարվածեց Գեղամ Մանուկյանին, ու ծեծկռտուքը սկսվեց:

Կարեն Համբարձումյան - Բոլոր ժամանակներում ԱԺ բախումների ակտիվ մասնակից: 2006-2018 թթ. ԲՀԿ անդամ է եղել, 2011 թվականից՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության քաղաքական խորհրդի անդամ, սակայն մարզպետի պաշտոնից ազատվելուց հետո նա հեռացավ ԲՀԿ-ից եւ արդեն «Իմ քայլ»-ի, հետո՝ ՔՊ-ի ցուցակով դարձավ պատգամավոր. սակայն պաշտոնական կենսագրությունից ԲՀԿ-ի հատվածը ջնջել է:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, որ Նիկոլ Փաշինյանը փակ ձեւաչափով իրավապահ մարմիններին հստակ ուղերձ է հղել. եթե կհաջողվի գտնել իրավական հիմքեր, որոնք կարող են հանգեցնել ՀՅԴ կուսակցության գործունեության արգելափակմանը Հայաստանում, ապա իշխանությունը ոչնչի առջեւ կանգ չի առնելու: Կփակեն Հայաստանի ամենահին կուսակցություններից մեկը: Սա խոսում է այն մասին, որ «Քաղաքացիական պայմանագիրն» ամբողջական պայքարի է անցել ընդդեմ ՀՅԴ-ի՝ ոչ միայն քաղաքական, այլ նաեւ իրավական հարթությունում: Անշուշտ, Փաշինյանի իշխանության գործելաոճը տարիներ շարունակ նույնն է եղել. նախ՝ հրապարակային մեղադրանք, ապա՝ ուղիղ SMS-հրահանգ իրավապահ կոնկրետ կառույցներին, եւ վերջում՝ քրեական հետապնդում: Մյուս փուլերը հանրությանը արդեն ծանոթ են: Բացահայտ վկայություն էր նաեւ ԱԺ վերջին ծեծկռտուքը, որը հրահրվեց ԱԺ պատգամավոր Արթուր Սարգսյանի ելույթից հետո: Դրան հաջորդած ՔՊ-ական բոլոր ելույթներում կարմիր թելով անցնում էր նույն ուղերձը՝ ՀՅԴ-ն, Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը 1999-ի հոկտեմբերի 27-ի, 2008-ի մարտի 1-ի եւ 2020-ի նոյեմբերի 9-ի՝ Կառավարության վրա հարձակման գլխավոր կազմակերպիչներն են, որոնք, ըստ իշխանական վարկածի, այժմ էլ՝ 2024-ին կամ 2025-ին, «Սրբազան շարժման» անվան տակ ծրագրում են ահաբեկչություն՝ ներքաշելով նաեւ Հայ առաքելական սուրբ եկեղեցուն: Հաշվի առնելով գործելաոճը՝ սպասելի են քրեական նոր հետապնդումներ, նոր ձերբակալություններ, հնարավոր հարձակումներ ոչ միայն կաթողիկոսի, այլեւ այլ հոգեւորականների եւ ընդդիմադիր գործիչների վրա: Սա կարող է դառնալ նախադեպ, երբ քաղաքական պայքարը վերածվում է ուղղակի ճնշման՝ պետական կառույցների լծակներով:

2025 թվականի հունվարի 8-ին ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետ նշանակված Ծովինար Թադեւոսյանի շուրջ քաղաքական իշխանության կուլիսներում ներքին դժգոհություն կա: Բանն այն է, որ չնայած նրա ջանքերին՝ ՔՊ-ում կարծիք է հնչել, որ բանտերի ներսում իրավիճակը վերահսկելու համար քրեական աշխարհին «տիրապետող», երկար տարիների փորձ ունեցող անձ է հարկավոր, եւ որ նախարար Սրբուհի Գալյանի մտերմուհին չի կարողանում վերահսկել իրավիճակը: Քաղաքական իշխանության ներսում անգամ խոսել են բանտերում ինքնավնասման ու դեռ ավելին՝ դատապարտյալների ու կալանավորների կյանքին վերջին տալու աղաղակող, ըստ ՔՊ-ի՝ աճող դեպքերի մասին: Այս տարվա 6 ամիսների ընթացքում 11 մահ է գրանցվել, որից 5-ը՝ ինքնասպանություն: Եվ ահա, չի բացառվում, որ քաղաքական թիմում Ծովինար Թադեւոսյանին փոխարինող կգտնեն, ինչը, միաժամանակ, հեշտ գործ չէ:

Նախկին լրագրող, սցենարիստ Արեն Մկրտչյանը, ով այսօր ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր է, «մերժված նախկիններ» վարքով է աչքի ընկնում: Ազգային ժողովում տեղի ունեցած ծեծի եւ հրմշտոցի կիզակետում նա ամենաակտիվ ծեծողներից էր, ով հարվածներ էր հասցնում ընդդիմադիր պատգամավոր Գեղամ Մանուկյանին: Հիշենք, թե ով էր Արեն Մկրտչյանը մինչեւ հեղափոխական պատգամավոր դառնալը: Երբեւէ փայլուն կենսագրություն չունեցող Մկրտչյանը 2018 թվականին դարձավ ՀՀ վարչապետի օգնական: 2011-2016 թվականներին նա եղել է «1in.am» լրատվական կայքի եւ «Ժամանակ» օրաթերթի սպորտային բաժինների խմբագիր: 2016-2018 թվականներին եղել է քաղաքական-հրապարակախոսական «SOS», իսկ 2017-2018 թվականներին՝ քաղաքական-երգիծական «Ք1» հաղորդաշարերի սցենարիստ: 2019-ից մինչեւ օրս ԱԺ պատգամավոր է: Ինչպես բոլոր ՔՊ-ականները, Մկրտչյանը եւս գույքային առաջխաղացում է ունեցել այս տարիների ընթացքում: Թեպետ հայտարարագրի՝ անշարժ գույքի վերաբերյալ բաժնում պատգամավորը ոչինչ չի հայտարարագրել, այնուամենայնիվ «ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնի համաձայն՝ նրա բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդը կազմել է 24 մլն 54 հազար դրամ: Ամենապասիվ պատգամավորներից մեկը (Արեն Մկրտչյան), որպես տրանսպորտային միջոց, հայտարարագրել է 2019 թվականին ձեռք բերված Mazda մակնիշի մեքենա: Մկրտչյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 468 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 5 մլն 300 հազար դրամ:



ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԵՍ ՓՈՐՁԵԼ ԵՄ ԽԱՂԱՂԵՑՆԵԼ ԻՐԱՎԻՃԱԿԸ». ԲԱՔՈՅԱՆ

Ազգային ժողովում արահերթ նիստերը շարունակում են անցնել լարված մթնոլորտում: Գրեթե յուրաքանչյուր նիստի ընթացքում խաղաքացիները, որոնք հետևում են պետական կառավարման ընթացքին, ականատես են լինում հայհոյանքների, անպարկեշտ արտահայտությունների եւ նույնիսկ ծեծկռտուքի: Բացառություն չէր նաեւ հուլիսի 8-ին տեղի ունեցած արտահերթ նիստը:

«Ժողովուրդ» օրաթերթը այս հարցի վերաբերյալ զրուցեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության մի շարք պատգամավորների հետ, որոնք ներգրավված են եղել խորհրդարանական միջադեպերում: Ձեզ ենք ներկայացնում հարցազրույցը ԱԺ պատգամավոր Ռուստամ Բաքոյանի հետ:

-Պարոն Բաքոյան, հանրությունը, ռադիոյով, հեռուստացույցով հետեւելով նիստերին, անընդհատ ականատես է լինում, այսպես կոչված, «18+» բովանդակության: Խորհրդարանում կամ հայհոյանք է, կամ ծեծկռտուք: Որքա՞ն պետք է շարունակվի այս վիճակը:

-Կարծում եմ՝ ընդդիմությունը պետք է առնվազն չսադրի եւ չտանի գործընթացը այն դաշտ, որն ինքն է ցանկանում:

Գլխավոր դատախազը հուլիսի 8-ին եկել էր Ազգային ժողով երեք պատգամավորի անձեռնմխելիությունից զրկելու հարցը քննարկելու համար, ընդդիմությունն իր համար ձեռնտու դիրքավորումով փորձում էր կողմնորոշվել՝ ինչպես հանդես գալ: Երբ քննարկվում էր Սեյրան Օհանյանի վերաբերյալ հարցը, ում դրությունը բավականին խոցելի է ընդդիմության համար, վերջիններս փորձեցին ստեղծել սադրիչ մթնոլորտ:

-Պարոն Բաքոյան, ՔՊ-ական պատգամավոր Վահե Ղալումյանը սկսեց ամեն բան. նա հնչեցրեց հայհոյանք, եւ սկսվեց կռիվը: Արդեն որերորդ դեպքն է, երբ նման սցենար է զարգանում:

-Խնդիրը բավականին խորքային է, եւ պետք է հասկանալ՝ որտեղից է գալիս: Ընդդիմությունը հրաժարվեց մասնակցել քննարկմանը: Պարոն Արծվիկ Մինասյանի վերբերյալ քննարկման ժամանակ փորձեցին համոզել, որ նա կարող էր տեղյակ չլինել որոշ հարցերից՝ որպես նորանշանակ նախարար: Բայց դա անձին չի ազատում պատասխանատվությունից: Մենք հնարավորություն ենք տվել, որ կատարվի ուսումնասիրություն, եւ եթե ոչինչ չկա, բնականաբար, հետեւանքներ էլ չեն լինի:

Ինչ վերաբերում է երրորդ պատգամավորին՝ Արթուր Սարգսյանին, ապա ձայնագրություններից պարզ է դառնում, որ նա մեղադրվում է ահաբեկչական ակտ իրականացնելու փորձի համար, որը կանխվել է: Ընդդիմության վարքագիծն այս հարցում, իմ կարծիքով, ցույց է տալիս, որ նրանք կրկին փորձում են խուսափել պատասխանատվությունից:

-Պարոն Բաքոյան, Դուք՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի փոխնախագահ, չե՞ք տեսնում, թե ինչ են անում ՔՊ-ական պատգամավորները՝ Արթուր Հովհաննիսյանը, Տիգրան Պարսիլյանը, Նարեկ Գրիգորյանը:

-Ես բոլոր միջադեպերի ժամանակ փորձում եմ հանդարտեցնել երկու կողմերին: Այս դեպքի ժամանակ նույնպես փորձել եմ կանխել ծեծկռտուքը եւ խաղաղեցնել իրավիճակը:

Զրուցեց ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԱՅՍՕՐ ԿՀԱՆԴԻՊԻ ԱԼԻԵՎԻ ՀԵՏ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հուլիսի 9-ին աշխատանքային այցով մեկնել է Արաբական Միացյալ Էմիրություններ: Այս մասին հայտնել է վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը:

«Այսօր Աբու Դաբիում նախատեսված է Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը ԱՄԷ նախագահ Շեյխ Մուհամմադ բին Զայեդ Ալ Նահյանի հետ:

Հուլիսի 10-ին, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության գործընթացի շրջանակում, Աբու Դաբիում տեղի կունենա երկկողմ հանդիպում՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիեւի միջեւ»,- հայտնել է նա:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ Ա. ՍԱՐԳՍՅԱՆԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ

ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Սարգսյանը 2 ամսով կալանավորվեց:

Նշենք, որ Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննվում էր Սարգսյանի դեմ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը:

Արթուր Սարգսյանին դատարանից տեղափոխեցին ՔԿՀ, դատարանի մոտ հավաքվածները նրան տեղափոխող մեքենային ճանապարհեցին ծափերով:

Հիշեցնենք, որ նույն դատավորը շաբաթներ առաջ կայացրեց նաեւ գործարար Սամվել Կարապետյանի կալանավորման միջնորդությունը:

Հայտնել էինք, որ ՀՀ Ազգային ժողովը բավարարել է գլխավոր դատախազի միջնորդագիրը՝ համաձայնություն տալով «Հայաստան» խմբակցության անդամ Արթուր Սարգսյանին ազատությունից զրկելու:

Ավելի վաղ պատգամավորները քվեարկությամբ բավարարել էին գլխավոր դատախազի միջնորդությունը՝ Սարգսյանին պատգամավորական անձեռնմխելիությունից զրկելու եւ նրա նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու համար:

Նշենք, որ մինչ ԱԺ-ն քննում էր Սարգսյանին ազատությունից զրկելու միջնորդությանը համաձայնության տալու հարցը, Արթուր Սարգսյանն իր կամքով Քննչական կոմիտեի մոտ էր եկել՝ վստահությամբ, որ կալանավորման որոշումն արդեն վաղուց կա:

Արթուր Սարգսյանին մեղսագրվում են ՀՀ քրեական օրենսգրքի 43-308 հոդվածի (ահաբեկչության նախապատրաստում) 1-ին մասով եւ 43-419 հոդվածի (իշխանության զավթման նախապատրաստում) 1-ին մասով գործողություններ:

Սարգսյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում նախաձեռնելու միջնորդությունը «Սրբազան պայքար» շարժման ղեկավարների եւ մասնակիցների կողմից ահաբեկչության եւ իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն կատարելու վերաբերյալ քրեական վարույթի շրջանակում է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀՀԿ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ

Հայաստանի Հանրապետական կուսակցության գործադիր մարմնի անդամները կուսակցության կենտրոնական գրասենյակում ընդունել են Արցախի Իրավունքների պաշտպանության խորհրդի ներկայացուցիչներին:

Հանդիպման ժամանակ քննարկվել են արցախցիների բռնի տեղահանման եւ Արցախի ամբողջական օկուպացիայի հետեւանքով Հայաստան տեղափոխված արցախցիների իրավունքների պաշտպանության խնդիրները:

Հայաստանի Հանրապետական կուսակցության գործադիր մարմնի ներկայացուցիչները նշել են, որ Արցախի ու արցախցիների թեման եղել ու մնում են ՀՀԿ-ի համար առաջնային օրակարգի հարց եւ ըստ այդմ՝ ՀՀԿ-ն այս հարցում հետեւողական քաղաքականություն է վարում:

ՀՀԿ ԳՄ-ից հանդիպմանը մասնակցել են Սամվել Նիկոյանը, Էդուարդ Շարմազանովն ու Տիգրան Աբրահամյանը:

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱԺ ԾԵԾԿՌՏՈՒՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հուլիսի 8-ին Ազգային ժողովում տեղի ունեցած աղմկոտ միջադեպը, որին ականատես եղավ անձամբ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը նաեւ, կարծես թե իրավական հետեւանքներ չի ունենալու:

ArmLur.am-ը հարցմամբ դիմել էր ՀՀ գլխավոր դատախազություն՝ պարզելու, թե արդյոք միջադեպի վերաբերյալ հաղորդում ներկայացվել է, եւ կա քրեական վարույթ, թե ոչ:

Պատասխանը հակիրճ էր՝ «Գլխավոր դատախազությունում քրեական վարույթի առկայության վերաբերյալ տեղեկություն առկա չէ»:

Հարցրել էինք նաեւ. «Հաշվի առնելով բարերար Սամվել Կարապետյանի վերաբերյալ հաղորդման նախադեպը, երբ Աննա Վարդապետյանն անձամբ էր հաղորդում ներկայացրել, հուլիսի 8-ի դեպքով ներկայացրե՞լ է արդյոք գլխավոր դատախազը հաղորդում»: Հարցին ի պատասխան՝ ArmLur.am-ին արձագանքել էին. «Օրենքով նախատեսված կարգով, «168.am» եւ «Aravot.daily» կայքերում տեղ գտած հրապարակումները ՀՀ գլխավոր դատախազի կողմից ուղարկվել են Քննչական կոմիտեի նախագահին՝ քրեական վարույթ նախաձեռնելու, հարցը լուծելու նպատակով»:

Ստացվում է՝ մամուլի հրապարակումների հիման վրա դատախազությունը պատրաստ է գործեր փոխանցել քննչական մարմիններին, իսկ ԱԺ-ում տեղի ունեցած միջադեպին որին ինքը՝ գլխավոր դատախազը հոտնկայս հետեւում էր, որեւէ ընթացք չի տրվում:

Սա եւս մեկ անգամ վկայում է՝ Հայաստանում օրենքի առաջ հավասարությունը դեռեւս ընտրողական բնույթ ունի: Երբ խոսքը վերաբերում է քաղաքական հնչեղություն ունեցող գործերին, դատախազությունն ակտիվանում է, իսկ երբ միջադեպը վերաբերելի է իշխանության ներկայացուցիչներին, անգամ հրապարակային վայրում՝ ներկայացուցչական թիվ մեկ մարմնում, իրավապահ համակարգի կողմից արձագանք է դառնում «տեղեկություն առկա չէ» նախադասությունը միայն:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԳՆ-ԻՑ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ ԵՆ

Բաքվից հայտարարում են, թե ՀՀ-ում Իրանի դեսպանի հայտարարությունները Տնտեսական համագործակցության կազմակերպության 17-րդ գագաթնաժողովի եզրափակիչ փաստաթղթի վերաբերյալ անընդունելի են: Ինչպես հաղորդում է ԱՊԱ-ն, այս մասին հայտարարել է Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության մամուլի ծառայության ղեկավար Այխան Հաջիզադեն:

Նրա խոսքով՝ ՏՀԿ բոլոր անդամ պետությունները, այդ թվում՝ Իրանը նաեւ Իսլամական համագործակցության կազմակերպության անդամ են, եւ նրանցից յուրաքանչյուրը իր աջակցությունն է հայտնել ««Արեւմտյան Ադրբեջան» համայնքի՝ իրենց հողերը վերադառնալու իրավունքին» հայտնի բանաձեւին, որն ընդունվել է Ստամբուլում հունիսի 21-22-ին կայացած ԻՀԿ նախարարների խորհրդի 51-րդ նստաշրջանի բանակցությունների արդյունքում:

Ադրբեջանի ԱԳՆ խոսնակը վիրավորել է Իրանի դեսպանին՝ նշելով, թե դեսպանի հայտարարությունները ոչ այլ ինչ են, քան «քաղաքական մանիպուլյացիա եւ երեսպաշտություն»:

ՀՌՈՄԻ ՊԱՊԸ ԱՌԱՋԱՐԿԵԼ Է ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հռոմի պապ Լեւոն XIV-ը Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկու հետ հանդիպմանը եւս մեկ անգամ առաջարկել է Վատիկանում ընդունել Ռուսաստանի եւ Ուկրաինայի ներկայացուցիչներին՝ բանակցությունների համար: Այս մասին հաղորդել է Վատիկանի մամուլի ծառայությունը:

Հռոմի պապը Զելենսկու հետ քննարկել է շարունակվող հակամարտությունը եւ ընդգծել արդար եւ կայուն խաղաղ կարգավորման տարբերակներ գտնելու կարեւորությունը:

Հիշեցնենք, որ Զելենսկու գրասենյակից հայտնել էին, որ նախագահը հանդիպում կունենա Իտալիայի նախագահ Սերջո Մատարելայի, ԱՄՆ նախագահի, Ուկրաինայի եւ Ռուսաստանի հարցերով բանագնաց Քիթ Քելոգի հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ՝ ՌԴ-ԻՆ

Ռուսաստանը իր քաղաքացիների՝ Հայաստան մուտքի արգելքը դիտարկում է որպես ոչ բարեկամական գործողություն: Երեւանին հակասությունների կարգավորման կոնկրետ քայլեր են առաջարկվել, Մոսկվան սպասում է արձագանքի: Այս մասին ճեպազրույցի ժամանակ հայտարարել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան, փոխանցում է ՏԱՍՍ-ը: «Մենք Ռուսաստանի քաղաքացիների մուտքի արգելքը համարում ենք ոչ բարեկամական գործողություն, որը հակասում է ռուս-հայաստանյան համագործակցության դաշնակցային բնույթին: Հարցը քննարկվել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի՝ մայիսին Հայաստանի Հանրապետություն կատարած այցի ժամանակ: Հայկական կողմին կոնկրետ քայլեր են առաջարկվել, ուստի սպասում ենք Երեւանի արձագանքին»,- ասել է Զախարովան:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ՝ ԹՐԱՄՓԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ

ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն հուլիսի 8-ին Սպիտակ տանը տեղի ունեցած Կառավարության նիստի ժամանակ հայտարարել է, որ ներկայիս պայմաններում իրենք հույս ունեն խաղաղության համաձայնագիր կնքել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ: Ռուբիոն այս հայտարարությամբ հանդես է եկել՝ ընդգծելով նախագահ Դոնալդ Թրամփի արտաքին քաղաքական նախաձեռնությունների հաջողությունները տարբեր տարածաշրջաններում:

Նրա խոսքով՝ ԱՄՆ-ն կարողացել է կանխել կամ դադարեցնել մի շարք հակամարտություններ, որոնք սպառնում էին վերաճել լայնածավալ պատերազմների: «Մենք կանխեցինք եւ ավարտեցինք Հնդկաստանի ու Պակիստանի միջեւ պատերազմը: Դա տպավորիչ էր: Եվ սա տեղի ունեցավ Ձեր ղեկավարության ներքո, պարոն նախագահ», - ասել է Ռուբիոն՝ հանդես գալով Սպիտակ տանը տեղի ունեցած Կառավարության նիստի ժամանակ, որտեղ նստած էր Դոնալդ Թրամփի կողքին:

Այդ համատեքստում Ռուբիոն ընդգծել է, որ ԱՄՆ-ն այժմ ակտիվորեն ներգրավված է Կովկասում՝ նպաստելով Երեւանի եւ Բաքվի միջեւ բանակցություններին:

«Հուսով ենք՝ որ շուտով խաղաղության համաձայնագիր կլինի Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ: Սա եւս մի կարեւոր քայլ կլինի կայունության ապահովման ուղղությամբ», - ասել է Ռուբիոն:

Նա նաեւ հավելել է, որ ԱՄՆ-ն այսօր միակ երկիրն է, որը կարող է իրական ազդեցություն ունենալ կողմերի վրա՝ օգտագործելով իր ազդեցությունը ոչ միայն դիվանագիտական, այլեւ տնտեսական հարթակներում: Ռուբիոն վստահեցրել է, որ ԱՄՆ-ն պատրաստ է ստանձնել միջնորդի դեր՝ տարածաշրջանում երկարատեւ խաղաղություն հաստատելու նպատակով:

Պետքարտուղարը նշել է, որ Դոնալդ Թրամփի վերադարձը քաղաքական դաշտ մեծ փոփոխություններ է բերել, հատկապես արտաքին քաղաքականության մեջ: Նրա խոսքով՝ Սիրիայի, Լիբանանի, ինչպես նաեւ Կոնգոյի ու Ռուանդայի հակամարտությունների կարգավորման գործում ունեցած արդյունքներն արդեն ցույց են տալիս հնարավոր հաջողությունը նաեւ Կովկասում: Նա նշել է, որ խաղաղությունն այս տարածաշրջանում կարող է փոխել տարածաշրջանի ամբողջ անվտանգային համակարգը:

Թեեւ Ռուբիոն չի մանրամասնել ԱՄՆ-ի կոնկրետ գործողությունների կամ պլանների մասին, սակայն վերջին հայտարարությունները ակնարկում են Վաշինգտոնի ակտիվ ներգրավվածություն այս գործընթացում, հնարավոր է՝ որպես բանակցող կողմերի միջեւ վստահված միջնորդ:

Հիշեցնենք, որ երկու օր առաջ՝ Իսրայելի վարչապետ Բենիամին Նետանյահուի հետ հանդիպումից առաջ, նախագահ Թրամփն իր հայտարարության մեջ եւս նշել էր, որ ԱՄՆ-ն կոշտ տնտեսական ճնշումներ է կիրառել Հնդկաստանի եւ Պակիստանի նկատմամբ՝ նախազգուշացնելով, որ գործարքներ չեն կնքվի, եթե կողմերը շարունակեն պատերազմական գործողությունները: «Նրանք կանգնած էին միջուկային պատերազմի եզրին, եւ մենք այդ վտանգը կանխեցինք՝ դադարեցնելով առեւտուրը: Ասացինք՝ չենք համագործակցի, եթե շարունակեք կռվել: Եվ դա ստացվեց», - հավելել է Թրամփը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆԱԽԱԳԱՀԸ ՍՏՈՐԱԳՐԵԼ Է ԸՆԴՈՒՆՎԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԸ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը հուլիսի 8-ին ստորագրել է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում լրացում կատարելու մասին, «Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին, «Սնանկության մասին» օրենքում լրացում կատարելու մասին, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին օրենքների փաթեթը:

ՌԴ-Ն ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՎՐԱ Է ԱՐՁԱԿԵԼ 728 ԱԹՍ

Ռուսաստանը գիշերը անօդաչու թռչող սարքերով եւ հրթիռներով զանգվածային նոր հարված է հասցրել Ուկրաինային: Հարվածների գլխավոր թիրախում է հայտնվել Լուցկ քաղաքը, որի վրա արձակվել են 5 «Կինժալ» հրթիռ եւ տասնյակ ԱԹՍ-ներ, այս մասին հաղորդում է BBC-ի ռուսական ծառայությունը:

Ընդհանուր առմամբ, ըստ Ուկրաինայի ռազմաօդային ուժերի, երկրի վրա արձակվել է 728 ԱԹՍ, ինչն ամենամեծ թիվն է ռազմական գործողությունների մեկնարկից ի վեր:

Բացի այդ, Ուկրաինայի վրա են արձակվել 13 «Իսկանդեր» եւ «Կինժալ» հրթիռներ: ԱԹՍ-ներից 718-ը եւ «Իսկանդեր» թեւավոր հրթիռներից 7-ը խոցվել են կամ ճնշվել ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցներով: Լուցկի վրա արձակվել է ավելի քան 50 ԱԹՍ, որոնցից 4-ը հարվածել են թիրախների, ԱԹՍ-ների բեկորներն ընկել են 14 վայրում:

Ըստ նախնական տվյալների՝ զոհեր չկան: Ուկրաինան էլ ԱԹՍ-ներ է արձակել Ռուսաստանի ուղղությամբ: Կուրսկում կա 3 զոհ, 7 վիրավոր:

ԿԱՆԽՎԵԼ Է ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանի հատուկ ծառայությունները չեզոքացրել են ահաբեկչի, որը պատրաստվում էր երկաթուղային կամուրջ պայթեցնել Սարատովի մարզում: Այս մասին հայտնում է ՌԴ անվտանգության դաշնային ծառայությունը: Ձերբակալության ժամանակ դիվերսանտը ոչնչացվել է: Դեպքի վայրում հայտնաբերվել է 11 կգ քաշով պայթուցիկ, «Մակարով» տեսակի ատրճանակ եւ ռազմամթերք:

ՊԱՅԹՅՈՒՆ՝ ԶՈՐԱՄԱՍՈՒՄ

ՎԻՐԱՎՈՐ ԵՆ ՓՈԽԳՆԴԱՊԵՏՆ ՈՒ ԶԻՆՎՈՐՆԵՐԸ

Քննչական կոմիտեն քրեական վարույթ է նախաձեռնել ՊՆ N զորամասում պայթյունի հետեւանքով վիրավորված վարժական հավաքների մասնակիցների դեմքով:

ArmLur.am-ին Քննչական կոմիտեից հայտնեցին, որ դեպքի առթիվ 08.07.2025թ.-ին վարույթ է հարուցվել ՀՀ ՔԿ ԶՔԳՎ երրորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 1-ին մասով՝

Հոդված 532. Զենքի, ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի կամ ռազմական այլ գույքի, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերի, սարքերի կամ առարկաների հետ վարվելու կանոնները խախտելը:

Զենքի, ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի կամ ռազմական այլ գույքի, ռադիոակտիվ նյութի, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ նյութի, սարքի կամ առարկայի հետ վարվելու կանոն խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում կամ խոշոր չափերի գույքային վնաս կամ տվյալ առարկայի ոչնչացում կամ վնասում՝ պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, եւ 550-րդ հոդվածի 1-ին մասով՝

հոդված 550. Զինվորական պաշտոնական անփութությունը

1. Հրամանատարի (պետի) կամ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետեւանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին՝ պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) անզգուշությամբ առաջացրել է մարդու առողջությանը ծանր վնասի պատճառում կամ մասով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Հիշեցնենք՝ «Ժողովուրդ» օրաթերթը ավելի վաղ գրել էր, որ մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ ՊՆ N զորամասում վիրավորում ստացածները 8 հոգի են եղել, ու բոլորը վարժական հավաքի մասնակիցներ:

Վիրավորներից մեկը վարժական հավաքի մասնակիցներին մարզող ՊՆ N զորամասի փոխգնդապետ է: Ըստ ArmLur.am-ին հասած լուրերի՝ վիրավորներից մի քանիսի վիճակը ծանր է:

Հիշեցնենք, որ պաշտպանության նախարարությունը երեկ հայտնել էր. «Հուլիսի 8-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում՝ ՊՆ N զորավարժադաշտում ուսումնական պարապմունքի ընթացքում, նախնական տվյալներով՝ ականանետային կրակոցի պայթյունի հետեւանքով, կան տուժածներ: Դեպքի հանգամանքներն ամբողջովին պարզելու նպատակով ընթանում է քննություն: Տուժածների առողջական վիճակի վերաբերյալ, ըստ անհրաժեշտության, կտրվի լրացուցիչ տեղեկատվություն. ՀՀ ՊՆ:

Մանրամասներ քիչ անց եւս կներկայացնենք», - ասված էր հաղորդագրության մեջ:

ՀՀ ՊՆ-ից ավելի ուշ հայտնել էին. «Ի լրումն հուլիսի 8-ին տարածած հաղորդագրության՝ տուժածների կյանքին վտանգ չի սպառնում, նրանք հոսպիտալի բուժանձնակազմի հսկողության ներքո են եւ ստանում են անհրաժեշտ բուժօգնություն»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԱՎԱՔԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔԸ

«Փաստաբանական համայնքից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ Քննչական կոմիտեն գործարար Սամվել Կարապետյանի ընկերության ձերբակալված աշխատակիցների առաջ ձայնագրություններ է դրել, որտեղ լսվում է քաղաքացու խոսակցություն, թե իրեն ստիպողաբար՝ շահագրգռելով բերել են հավաքի:

Մինչդեռ քաղաքացին Կոմիտեում ցուցմունք է տվել եւ հայտնել, որ իրեն որեւէ մեկը չի ստիպել եւ պարտադրաբար չի բերել:

Ձայնագրության մեջ երկու անձ խոսել են 3-րդ անձի մասին, միչդեռ 3-րդ անձը պնդում է, որ իրեն որեւէ մեկը չի հարկադրել:

Այս պահին կա 2 կալանավորված:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ փաստաբանները հայտնել են, թե պարզել են արդյոք քննիչները՝ ովքեր են այդ մարդիկ, կա արդյոք մեկը, որը իրականում կգա ու կասի, որ ձայնագրության մեջ լսվող ձայնն իրենն է, եւ իրեն, այո, ստիպել են անցած շաբաթ իրականացված, Սամվել Կարապետյանի աջակցությանը նվիրված ակցիային մասնակցել: Ի պատասխան այս պնդումների՝ չի եղել գեթ մեկ անձ, որը իրավապահներին անձամբ պատմած լինի այդ մասին. բացառապես ձայնագրություններ են եղել, որոնք, կասկածներ կան, որ «սարքված» են:

«Ժողովուրդ» օրաթերթը իրավապահ շրջանակի իր աղբյուրներից պարզեց, որ գործարարի ընկերության աշխատակիցներին հուլիսի 8-ի գիշերը տարել են դատարան կալանավորելու նպատակով, ու կալանքները այսքանով չեն սահմանափակվելու. Փաշինյանը դեռ շատերին է բանտ ուղարկելու:

Հիշեցնենք, որ հուլիսի 8-ին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կենտրոնական գրասենյակում եւ գործարար Սամվել Կարապետյանի եղբորորդի Նարեկ Կարապետյանի տանը խուզարկություններ իրականացվեցին Քննչական կոմիտե աշխատակիցների կողմից:

Դեպքից հետո Կոմիտեն հայտնեց, որ բացահայտվել են հուլիսի 4-ին Սամվել Կարապետյանին աջակցելու համար իրականացված հավաքի մասնակցությանը հարկադրելու, նյութապես շահագրգռելու մի շարք դեպքեր. 3 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում: Մարդկանց անգամ կալանքի են տանում, բայց չկա մի քաղաքացի, որին իրականում ստիպել են ակցիայի մասնակցել, եւ որը հայտնել է քննիչներին այդ մասին:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Քրեական ոստիկանության՝ թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները օպերատիվ-հետախուզական ծավալուն միջոցառումների արդյունքում ստացան ապօրինի թմրաշրջանառության վերաբերյալ հերթական հավաստի տեղեկությունը, որն իրացրին՝ համագործակցելով Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ծառայողների եւ Երեւանի պարեկների հետ:

Համատեղ աշխատանքի արդյունքում հուլիսի 7-ին՝ ժամը 15:20-ին, մայրաքաղաքի Մազմանյան փողոցում ձերբակալվեցին Զորաղբյուրի բնակիչ երկու տղամարդ ու ու երեւանցի մի կին:

40-ամյա տղամարդու վարած «Ֆորդ» մակնիշի մեքենայով հանդերձ նրանք տեղափոխվեցին Համայնքային ոստիկանության Էրեբունու բաժին: Վարորդի խուզարկությամբ հայտնաբերվեց մոխրանման հետքերով կաթուցիչ, նաեւ ծալովի դանակ: Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում. դատարանի որոշմամբ. 40-ամյա տղամարդու տունը խուզարկվեց:

Հայտնաբերվեցին տարատեսակ թմրամիջոցների առանձնապես խոշոր չափերով զանգվածներ, մասնավորապես՝ 3 կիլոգրամ 742 գրամ ափիոն, 1 կիլոգրամ 850 գրամ մարիխուանա, 596 գրամ մեթամֆետամին, 256 գրամ հաշիշ ու մեթադոնի 10 հաբ, նաեւ գնդացրի երկու փամփուշտ:

Միայն այս բացահայտմամբ շրջանառությունից դուրս է բերվել շուկայական արժեքով շուրջ 216 միլիոն դրամի թմրամիջոց:

Երեքն էլ տեղափոխվել են ձերբակալվածների պահման վայր: Նշանակվել են դատաքիմիական եւ դատաձգաբանական փորձաքննություններ: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԸ ԲԱՎԱՐԱՐՎԵԼ Է

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 2-ի վճռով բավարարվել է Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության հերթական հայցը. դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո «Սեւան»» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին կվերադարձվի Գեղարքունիքի մարզի Ծովազարդ գյուղի հյուսիս-արեւելյան հատվածը, Սեւան-Գավառ ճանապարհի աջ կողմում գտնվող՝ 15 հազար քմ մակերեսով, 5 միլիոն 682 հազար դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով հողամասը: Միաժամանակ անվավեր է ճանաչվել պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցումը:

Հիշեցնենք, որ Գլխավոր դատախազությունը պետական շահերի պաշտպանության գործառույթի շրջանակներում ներկայացված հայցով դատարանից պահանջել էր անվավեր ճանաչել «Սեւան»» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի եւ արտադրական կոոպերատիվի միջեւ 2009 թվականի մարտի 11-ին կնքված՝ պետական սեփականություն հանդիսացող «վերոնշյալ հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիրը եւ կիրառել անվավերության հետեւանքներ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 8-ից 9-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 131 դեպք, որից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԻՐԵՆՑ ԿԱՌԱՎԱՐԱԾ ՈԼՈՐՏԻՑ ԱՆՏԵՂՅԱԿ ԵՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հունիսի 27-ին հարցրել են. «2025թ. փետրվարին հայտնել եք, որ սկսած 2024 թվականի նոյեմբերից կդիտարկվեն 2 անգամ կամավոր ատեստավորումից դուրս մնացած ուսուցիչները եւ տվյալ դպրոցի տնօրենը կառաջնորդվի սահմանված կարգով: Կամավոր ատեստավորումից 2 անգամ դուրս մնացած ուսուցիչները այժմ դիտարկվո՞ւմ են, տվյալ դպրոցի տնօրենը սահմանված ի՞նչ կարգով է առաջնորդվում: Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների քանի՞ ուսուցիչ է կամավոր ատեստավորումից 2 անգամ բացասական արդյունք ունեցել»: Մարզպետարանից ստացել ենք պատասխան. «Հարցի վերաբերյալ առաջարկում ենք դիմել համապատասխան լիազոր մարմնին»: Մարզպետը չի նշել, թե որն է համապատասխան լիազոր մարմինը. մարզի հանրակրթական դպրոցները մարզպետարանի անմիջական ենթակայությամբ են գործում: Ստացվում է, որ մարզպետը, մարզպետարանի պաշտոնյաներն իրենց գործից անտեղյակ են, սակայն վատ աշխատանքի համար 13,6 միլիարդ դոլար պետական պարտք ունեցող Հայաստանի պետբյուջեից ճոխ պարգեւատրվում են: Տավուշի մարզպետը եւ մարզպետարանի պաշտոնյաները 2025թ. պետբյուջեից կստանան 67 միլիոն 542 հազար դրամ պարգեւավճար:

ՔԱՆԴՎԱԾ 10 ՏԵՂԱՄԱՍԵՐԸ ԴԵՌ ՉԵՆ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ

Նախկինում Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը հայտնել էր, որ 2024թ. մայիսի 27-ի ջրհեղեղից միջպետական ավտոճանապարհի Դիլիջան-Իջեւան հատվածի քանդված ճանապարհաեզրերի վերականգնման աշխատանքները կիրականացվեն 2025թ.-ի առաջին կիսամյակում: Առաջին կիսամյակն ավարտվել է, սակայն քանդված հատվածները չեն նորոգվել: Հունիսի 27-ին մարզպետ Ղալումյանին հարցրել ենք՝ ե՞րբ է նախատեսում իրականացնել եւ ավարտել 2024թ. մայիսի 27-ի ջրհեղեղից միջպետական ավտոճանապարհի Դիլիջան-Իջեւան հատվածի քանդված ճանապարհաեզրերի վերականգնման աշխատանքները: Մարզպետարանից պատասխանել են. «2025թ. պետական բյուջեի միջոցներով ՀՀ ՏԿԵՆ պատվիրատվությամբ նախատեսվել է իրականացնել՝ Մ-4, Երեւան-Սեւան-Իջեւան-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Դիլիջանից մինչեւ Հ-30 ավտոճանապարհի հետ հատման կետ հատվածում ջրհեղեղի հետեւանքով ողողված եւ փլուզված թվով 10 տեղամասերի վերակառուցման աշխատանքները: Լիազոր մարմնի կողմից այն գտնվում է մրցութային գործընթացի ապահովման փուլում: Աշխատանքները կիրականացվեն 2025թ. ընթացքում (հստակ ժամանակահատվածը կլինի պայմանագրի առկայության պարագայում)»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՔՊ-ՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ ԵՆ ՇՐՋԱՆԱՌՎՈՒՄ

Ո՞Վ ԿԼԻՆԻ ՀԷՑ-Ի ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐԻՉԸ

Հունիսի 8-ին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը ստորագրել է ՀԷՑ-ի ոլորտականացման նպատակով ընդունված օրենքները:

Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ Վահագն Խաչատուրյանը հուլիսի 8-ին ստորագրել է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում լրացում կատարելու մասին, «Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին, «Մնանկության մասին» օրենքում լրացում կատարելու մասին, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին օրենքների փաթեթը:

ArmLur.am-ի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ իշխանական քաղաքական շրջանակում լուրեր են շրջանառվում, որ Նիկոլ Փաշինյանը նպատակ ունի ՀԷՑ-ի կառավարիչ նշանակել ՊՎԾ ղեկավար Ռոմանոս Պետրոսյանին:

Ըստ ArmLur.am-ի տեղեկությունների՝ Փաշինյանն ասել է, որ պետք է շատ վստահելի անձի նշանակել այդ պաշտոնում, որը կկարողանա վերահսկել ՀԷՑ-ի մոտ 6800 աշխատակցի:

Իշխանական մեր աղբյուրները փոխանցում են նաեւ, որ քննարկել են նաեւ իրենց թիմի անդամներից մեկի թեկնածությունը, որը ժամանակին ՀԷՑ-ում է աշխատել ու քաջատեղյակ է, թե ինչ իրավիճակ է այնտեղ, բայց ընտրության վերաբերյալ դեռեւս վերջնական որոշում չի կայացվել:

Մենք դիմեցինք ՊՎԾ ղեկավար Ռոմանոս Պետրոսյանին պարզելու համար՝ արդյոք ինքը նման առաջարկ ստացել է, թե ոչ: Պետրոսյանը հայտարարեց, որ որեւէ մեկնաբանություն չունի:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՏՈՒԳԱՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՀՀ ազգային ժողովի Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արսեն Թորոսյանը պատգամավորներ Հասմիկ Հակոբյանը եւ Արեն Մկրտչյանը շրջանառության մեջ են դրել Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծ, որը վերաբերում է բուժաշխատողների մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելուն: Այս մասին ֆեյսբուքյան իր էջում տեղեկացրել է Արսեն Թորոսյանը:

«Հաշվի առնելով վերջին շրջանում բուժաշխատողների վրա հարձակումների եւ նրանց մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու դեպքերը՝ երկարատեւ քննարկումներից հետո ԱԺ պատգամավորներ Հասմիկ Հակոբյանի եւ Արեն Մկրտչյանի հետ շրջանառության մեջ ենք դրել Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին մի նախագիծ: Դրանով նախատեսվում է քրեական պատասխանատվություն բուժաշխատողների մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու համար եւ ավելի խիստ պատասխանատվություն, եթե դա զուգակցվում է բռնության սպառնալիքով:

Բռնության իրագործման դեպքերի համար պատասխանատվությունը ՔրՕր-ով արդեն իսկ նախատեսված է եւ մենք պետք է աշխատենք դրա կիրառումը բարելավելու ուղղությամբ, ինչպես նաեւ որպես հանրություն պետք է փոխվենք, հասկանանք, որ չի կարելի խոչընդոտել, սպառնալ կամ բռնություն գործադրել իրենց մասնագիտական պարտքը կատարող բուժաշխատողների նկատմամբ, ինչպես, օրինակ, ոստիկանի կամ փրկարարի նկատմամբ: Նախ նման վարքագիծ չի կարելի դրսեւորել ընդհանրապես որեւէ մեկի նկատմամբ, բայց նաեւ միշտ պետք է հիշել, որ դրա պատճառով կարող է տուժել մեկը, ում բուժօգնություն են ցուցաբերում մեր բուժաշխատողները, եւ այդ մեկը կարող է լինել հենց մեր հարազատը»,- գրել է Արսեն Թորոսյանը՝ հրապարակելով նաեւ փոփոխության նախագիծն ամբողջությամբ:

Հոդված 187.1 Բուժաշխատողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը

1. Բուժաշխատողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տեւողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է բուժաշխատողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տեւողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով»,- նշել է պատգամավորը:

ՀԾԿՀ-Ն ՄԵՐԺԵԼ Է ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ՀԾԿՀ-ն մերժեց ՀԷՑ-ի ներդրումային ծրագրի՝ 2025 թվականի մասով առաջարկվող փոփոխությունները:

Սույն թվականի հուլիսի 8-ի նիստում ՀՀ Հանրային ծառայությունների կարգավորող հանձնաժողովի որոշմամբ մերժվեց «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված 2018-2034 թվականների ներդրումային ծրագրի 2025 թվականի մասով փոփոխությունները:

ՀԷՑ-ը դիմել էր հաստատման՝ իր 2018-2034 թվականների ներդրումային ծրագիրը փոփոխելու համար, մասնավորապես 2025 թվականի մասով՝ առաջարկելով նախատեսված ներդրումների ավելացում նախկինում հաստատված 47.6 միլիարդ դրամից մինչեւ 53.98 միլիարդ դրամ: Ներկայացված ներդրումային ծրագրի փոփոխության անհրաժեշտությունը ընկերությունը պայմանավորել է հաստատված ծավալների հստակեցման եւ նոր աշխատանքների իրականացման անհրաժեշտությամբ:

Ուսումնասիրությունից հետո հանձնաժողովը որոշեց, որ առաջարկվող փոփոխությունները չեն կարող հաստատվել երկու հիմնական պատճառով: Ըստ ընկերության կողմից ներկայացված հաշվարկների՝ առաջարկվող աշխատանքների իրականացումը կբերի մեծ քանակությամբ պլանային անջատումների եւ կհանգեցնի հաճախորդների էլեկտրաէներգիայի մատակարարման որակի զգալի վատթարացման: Հիմնական հուսալիության ցուցանիշները՝ համակարգի միջին ընդհատումների տեւողության ինդեքսը (SAIDI) եւ համակարգի միջին ընդհատումների հաճախականության ինդեքսը (SAIFI), զգալիորեն կվատթարանան ՀԷՑ-ի գործող հաստատված ծրագրով սահմանված 2025 թվականի նպատակների եւ 2021 թվականին սահմանված բազային ցուցանիշների համեմատ:

Այս արդյունքը հակասում է ՀԾԿՀ-ի հիմնադիր սկզբունքին՝ ապահովել սպառողներին որակյալ ծառայությունների մատուցում:

ՀԾԿՀ-ն ընդգծում է իր օրենսդրական պարտավորությունը՝ հավասարակշռել սպառողների շահերը կարգավորվող կազմակերպությունների շահերի հետ: Արդյունքում, Հանձնաժողովը եկավ այն եզրակացության, որ ընկերության առաջարկած փոփոխությունները չեն կարող ապահովել այս անհրաժեշտ հավասարակշռությանը:

Հանձնաժողովի որոշումն ընդունվեց 3 կողմ, 1 դեմ հարաբերակցությամբ (հանձնաժողովի անդամ Արա Նռանյանը ներկայացրեց հատուկ կարծիք): Որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 16 պատահար, 3 մարդ զոհվել է, 20-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՆԱՎԹ, ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐ ԵՎ ԻՆԴԵՔՍՆԵՐ

Աշխարհի խոշորագույն հումքային բորսաներում հուլիսի 8-ին կայացած առեւտրային շրջանների արդյունքում սահմանվել են նավթի հետեւյալ գները.

Նյու-Յորքի NYMEX (New York Merchantile Exchange) բորսայում նավթի WTI (Light Sweet) տեսակի գինն աճել է 0.89%-ով եւ կազմել 68.24 դոլար, իսկ Լոնդոնի ICE (InterContinental Exchange Futures) բորսայում նավթի Brent տեսակի գինն աճել է 1.10%-ով եւ կազմել 70.07 դոլար:

Չափման միավորը՝ 1 բարել (158.98 լիտր):

NYMEX. Թանկարժեք մետաղների գներ

Նյու-Յորքի NYMEX բորսայում հուլիսի 8-ին կայացած առեւտրային շրջանի արդյունքում սահմանվել են թանկարժեք մետաղների հետեւյալ գները.

Ոսկու ֆյուչերսների գինը նվազել է 1.20%-ով եւ կազմել 3301.70 դոլար, արծաթի ֆյուչերսների գինը նվազել է 0.65%-ով եւ կազմել 36.77 դոլար, իսկ պլատինի ֆյուչերսների գինն աճել է 0.14%-ով եւ կազմել 1381.80 դոլար:

Չափման միավորը՝ 1 տրոյական ունցիա (31.1 գրամ):

LME. Գունավոր մետաղների գներ

Լոնդոնի մետաղների բորսայում (LME) հուլիսի 8-ին կայացած առեւտրային շրջանի արդյունքում գունավոր մետաղների առաջիկա երեք ամիսների ֆյուչերսների համար սահմանվել են հետեւյալ գները.

Ալյումինի գինն աճել է 0.49%-ով եւ կազմել 2586.00 դոլար, պղնձի գինը նվազել է 0.40%-ով եւ կազմել 9790.50 դոլար, կապարի գինն աճել է 0.98%-ով եւ կազմել 2056.50 դոլար, նիկելի գինը նվազել է 0.89%-ով եւ կազմել 15042.00 դոլար, անագի գինն աճել է 0.34%-ով եւ կազմել 33397.00 դոլար, ցինկի գինն աճել է 1.34%-ով եւ կազմել 2720.50 դոլար, մոլիբդենի գինն աճել է 0.54%-ով եւ կազմել 48986.66 դոլար, կոբալտի գինը չի փոխվել եւ կրկին կազմել է 33335.00 դոլար:

Չափման միավորը՝ 1 տոննա:

Ամերիկյան ինդեքսներ

ԱՄՆ ֆոնդային բորսաներում հուլիսի 8-ին կայացած առեւտրային շրջանների արդյունքները հետեւյալն են.

Արդյունաբերական Dow Jones ինդեքսը նվազել է 0.37%-ով եւ կազմել 44240.76 կետ, լայն սպառման շուկաների S&P 500 ինդեքսը նվազել է 0.07%-ով եւ կազմել 6225.52 կետ, իսկ բարձր տեխնոլոգիաների Nasdaq ինդեքսն աճել է 0.03%-ով եւ կազմել 20418.46 կետ:

Եվրոպական ինդեքսներն աճել են

Եվրոպական ֆոնդային բորսաներում հուլիսի 8-ին կայացած առեւտրային շրջանների արդյունքները հետեւյալն են.

Գերմանական DAX ինդեքսն աճել է 0.55%-ով եւ կազմել 24206.91 կետ, ֆրանսիական CAC 40 ինդեքսն աճել է 0.56%-ով եւ կազմել 7766.71 կետ, բրիտանական FTSE ինդեքսն աճել է 0.54%-ով եւ կազմել 8854.18 կետ:

«ԿՈՆՎԵՐՍ» ԲԱՆԿ

Converse Mobile ՀԱՎԵԼՎԱԾԸ՝ ԹԱՐՄԱՑՎԱԾ

Converse Mobile-ում հաճախորդներին համապարփակ բանկային ծառայություններ մատուցելու նկատառումով զգալիորեն ընդլայնվել է հավելվածում հասանելի ծառայությունների ցանկը եւ հնարավորությունները: Մասնավորապես.

● Այսուհետեւ անմիջապես հավելվածից կարող եք բարձրացնել C360 փաթեթի դասը եւ օգտվել ավելի ընգրկուն եւ Ձեր կենսակերպին համապատասխան ծառայություններից եւ հատուկ առաջարկներից:

Դրա համար հավելվածում մուտք գործեք «Անձնական էջ», «C360», ապա սեղմեք «Դասի բարձրացում» կոճակը:

● Ավելացվել է «Ձվարթնոց» օդանավակայանի ծառայությունների վաուչերների ձեռքբերման հնարավորությունը: Մասնավորապես.

● Fast Track ծառայություն. Հիանալի առաջարկ է նրանց համար, ովքեր օդանավակայանում մտադիր են օգտվել արագ անցման հնարավորությունից,

● Business Lounge & Fast Track ծառայություն. տրամադրվում է միաժամանակ Fast Track անցման եւ Converse Business Lounge սրահ մուտքի հնարավորություն թռիչքի սպասելու ընթացքն ավելի հարմարավետ դարձնելու համար,

● VIP Lounge ծառայություն. հնարավորություն է տալիս մուտք գործել «Ձվարթնոց» օդանավակայանի VIP սրահ:

Վաուչեր ձեռք բերել կարելի է՝ հավելվածում մուտք գործելով «Վճարումներ եւ փոխանցումներ», «Վճարումներ», «Ձվարթնոց», ապա ընտրելով անհրաժեշտ ծառայությունը:

Վաուչերը Ձեզ կուղարկվի բանկում գրանցված էլ. փոստով եւ հասանելի կլինի հավելվածում՝ «Անձնական էջ», «Իմ վաուչերները» բաժնում:

● Կարող եք դիտել Converse Mobile-ին կցված այլ բանկերի քարտերի մնացորդները՝ հավելվածում մուտք գործելով «Իմ պրոդուկտները», «Կցված քարտեր», ապա ընտրելով քարտը եւ սեղմելով «Ցուցադրել մնացորդը»:

● Quick Actions. Այս ֆունկցիան օգնում է առանց հավելվածը բացելու արագ հասանելիություն ստանալ ամենահաճախ օգտագործվող ծառայություններին: Դրանից օգտվելու համար բավարար է սմարթֆոնի էկրանին սեղմած պահել հավելվածի լոգոն, ապա բացված էջում ընտրել ծառայությունը՝

● Փոխանցում քարտին,

● Փոխանցում ընկերոջը,

● Ավտոկայանատեղիի վճարում:

● Թարմացվել է գույքահարկի վճարման ինտերֆեյսը, ինչի արդյունքում հաճախորդները կարող են.

● Կատարել գույքահարկի պարտավորությունների պարզ որոնում եւ ընտրություն,

● Վճարում կատարել մեկ քայլով, որի արդյունքում խմբային վճարման դեպքում յուրաքանչյուր գույքի համար ձեւավորվում է առանձին անդորրագիր:

● Անվտանգության ապահովման նպատակով PIN կոդի փոփոխության ժամանակ ավելացվել է OTP-ի մուտքագրման պահանջը:

● Իսկ Ձեր ֆինանսների անվտանգությունը կապահովվի «trusted device»-ի շնորհիվ. սա գաջեթն է (սմարթֆոն կամ պլանշետ), որը բանկի համակարգի կողմից ճանաչվում է որպես վստահելի եւ ապահով՝ հաճախորդի կողմից իր բանկային հաշիվ մուտք գործելու եւ Converse Mobile հավելվածով ֆինանսական գործարքներ կատարելու համար: Դա, որպես կանոն, այն գաջեթն է, որով հաճախորդը հիմնականում մուտք է գործում մոբայլ հավելված:

Այս տեխնոլոգիայի շնորհիվ, եթե անգամ զեղծարարները հասանելիություն ստանան հաճախորդների անձնական ու բանկային տվյալներին, չեն կարողանա մուտք գործել Ձեր Converse Mobile:

Բանկում նշել են, որ հավելվածի թարմացումները լինելու են շարունակական եւ միտված են լինելու հավելվածի օգտատերերին թվային համապարփակ ծառայությունների մատուցումը լավագույն ֆինանսական փորձառությամբ ապահովելու նպատակով:

Team Telecom Armenia

TEAM-Ի ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎԵՑ Tech Week 2025-Ը

Հուլիսի 4-6-ը Վանաձորը տեխնոլոգիական մայրաքաղաքի կարգավիճակում էր. Լոռին հյուրընկալել էր հայկական տեխնոլոգիական համայնքի կարեւորագույն իրադարձություններից մեկը՝ Tech Week 2025-ը, որի տեխնոլոգիական գործընկերը Team Telecom Armenia-ն է: Tech Week Vanadzor-ը նախաձեռնել են TCF-ը, Zealous-ը եւ Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԱՏՁՄ):

Երեք օրերի ընթացքում Վանաձորը միավորել էր տեխնոհամայնքի առաջատարներին, տեխնոլոգիական ընկերությունների ղեկավարներին, փորձառու եւ սկսնակ ձեռնարկատերերին, ուսանողներին եւ բոլոր նրանց, ովքեր հետաքրքրված են տեխնոլոգիական ոլորտով:

«Լինելով Հայաստանի տեխնոլոգիական ոլորտի առաջատար ընկերություն՝ Team Telecom Armenia-ն մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահում երկրի համար նշանակալի տեխնոլոգիական, գիտական ու կրթական իրադարձությունները, միաժամանակ բազմաթիվ ծրագրեր է իրականացնում մարզերի համաչափ զարգացման համար:

Tech Week-ը արդյունավետորեն միավորում է նշված բոլոր ուղղությունները՝ նպաստելով դրանց զարգացմանը երկրի տարբեր անկյուններում»,-նշում է Team Telecom Armenia-ի հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար Գրիգորի Յուրինը:

Տեխնոլոգիական ոլորտի նշանակալի միջոցառման շրջանակում անցկացվել են կոնֆերանսներ եւ պանելային քննարկումներ տեղական եւ միջազգային փորձագետների մասնակցությամբ: Երեք օրերի ընթացքում կոնֆերանսին ներկա է գտնվել շուրջ 2800 մասնակից, ելույթով հանդես է եկել ավելի քան 60 խոսնակ՝ ընկերությունների հիմնադիրներ, ղեկավարներ, տեխնոլոգիական ձեռներեցներ, ներդրողներ եւ ոլորտի այլ առաջատար դերակատարներ:

«Նման միջոցառումները շփման, համագործակցությունների ձեռքբերման հրաշալի հարթակ են: Դրանք երիտասարդներին առաջին հերթին հնարավորություն են տալիս ծանոթանալու կայացած ընկերությունների հիմնադիրների, ներկայացուցիչների հետ, անմիջապես նրանց ուղղելու իրենց հարցերը, տեղում ստանալու պատասխաններ»,- ասում է ԱՏՁՄ գործադիր տնօրեն Սարգիս Կարապետյանը:

Tech Week Vanadzor 2025-ի շրջանակում անցկացվել են նաեւ ԴեւHacks հակատոնը եւ «Wings» գաղափարների մրցույթը, հաղթողները պարգեւատրվել են մրցանակներով:

Tech Week 2026-ի տեխնոլոգիական մայրաքաղաք է հռչակվել Գորիսը:

Տեղեկություն՝ Team Telecom Armenia-ի մասին

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին: Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում ընկերությունն աջակցում է տեխնոլոգիական, կրթական ու գիտական, ինչպես նաեւ բնապահպանական նախագծերի իրագործմանը, նպաստում հայկական բովանդակության ստեղծմանն ու տարածմանը, մարզերի զարգացմանը ու թիմային ոգին խրախուսող մարզաձեւերի ու նախաձեռնությունների իրականացմանը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԽԱՄԱՃԻԿՆԵՐԻ ԹԱՏՐՈՆԸ «ՈՍԿԵ» ԴԻՊԼՈՄ Է ՍՏԱՑԵԼ

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ԱՄՓՈՓՎԵՑ «ԿՈՒԿԱՐՏ» 2025-Ը

Օրերս Սանկտ Պետերբուրգում եւ Վիբորգում անցկացվեց տիկնիկային եւ սինթետիկ թատրոնների միջազգային փառատոն-բիենալեն՝ «Կուկարտ XVII»-ը, որի առանցքային իյուրերից էր Հայաստանի պատվիրակությունը: Երեւանի Խամաճիկների պետական թատրոնը փառատոնում ներկայացավ ռեժիսոր Սամսոն Մովսիսյանի «Կարապի լիճը» բեմադրությամբ:

Չայկովսկու համանուն բալետի հիման վրա ստեղծված այս ներկայացումը պատմում է արքայազնի եւ կարապ Օդետի սիրո պատմությունը, որը համարվում է համաշխարհային դասական սիրո պատմություններից մեկը: Թեեւ բեմադրությունը նախատեսված էր հասուն հանդիսատեսի համար, Խամաճիկների թատրոնի պարզ, հասանելի ու գեղարվեստորեն նուրբ ձեւավորման շնորհիվ այն մեծ արձագանք գտավ նաեւ երեխաների շրջանում:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, ներկայացումն արժանացել է բարձր գնահատականի ինչպես հանդիսատեսի, այնպես էլ տիկնիկային արվեստի մասնագետների կողմից, ինչի արդյունքում թատրոնն արժանացավ «Ոսկե» դիպլոմի՝ փառատոնին արժանավայել մասնակցության համար:

«Կուկարտ»-ը միակ բարեգործական տիկնիկային փառատոնն է աշխարհում, որն առաջնորդվում է «Մեկ թատրոն՝ բոլորի համար» գաղափարով: Այն հիմնադրվել է Սանկտ Պետերբուրգում 1993 թվականին ռեժիսոր Միխայիլ Խուսիդի եւ նկարիչ Յուրի Նոլեւի-Սոբոլեւի նախաձեռնությամբ եւ անցկացվում է երկու տարին մեկ: Այս տարվա ծրագիրը բաղկացած էր երեք բաժնից՝

Հիմնական ծրագիր - տիկնիկային թատրոնների լավագույն բեմադրություններով

Հատուկ ծրագիր՝ «Պետրուշկան Նեւսկու վրա» - փողոցային ներկայացումներով

Ակումբային ծրագիր - փորձարարական եւ սինթետիկ նախագծերով:

Հայկական թատրոնի մասնակցությունը դարձավ ոչ միայն մշակութային ներկայացում, այլեւ համագործակցության նոր հնարավորությունների սկիզբ: Փառատոնի շրջանակում թատրոնի ներկայացուցիչները հանդիպումներ ունեցան Սանկտ Պետերբուրգի Մարիոնետների թատրոնի եւ Տիկնիկային մեծ թատրոնի ղեկավար կազմի հետ:

Կողմերը ձեռք բերեցին պայմանավորվածություններ փոխադարձ այցելությունների եւ փորձի փոխանակման շուրջ: Համագործակցության նախնական փուլում նախատեսվում են փոխադարձ հյուրախաղեր Երեւանում եւ Սանկտ Պետերբուրգում:

Ելույթը հետաքրքրություն է առաջացրել նաեւ Ռուսաստանի այլ քաղաքներում: Թատրոնը արդեն ստացել է հրավերներ՝ ներկայացումներով հանդես գալու Մոսկվայում, Եկատերինբուրգում եւ Կրասնոդարում:

Երեւանի Խամաճիկների թատրոնի հաջող մասնակցությունը փառատոնին եւս վկայեց, որ հայկական տիկնիկային արվեստը կարող է արժանի կերպով ներկայացվել միջազգային բեմերում՝ պահպանելով իր ինքնատիպությունը եւ հանդիսատեսի հետ անմիջական կապը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՇՈՈՒ ԲԻԶՆԵՍ

Ջ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ ԱՆԴՐԵԱ ԲՈՉԵԼԻԻ ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՏՈՒՐԸ

Օպերային երգչուհի Ջուլիանա Գրիգորյանն ինստագրամյան իր էջում հրապարակել է կադրեր, որտեղ ԱՄՆ-ում համերգային ծրագրով շրջագայում է աշխարհահռչակ Անդրեա Բոչելիի հետ:

Ջուլիանա Գրիգորյանը 2022-ին կայացած «Operalia» վոկալ մրցույթի հաղթողն է եւ հանդիսատեսի համակրանքի մրցանակակիրը: Երգչուհին ելույթներ է ունենում ամենահեղինակավոր օպերային թատրոններում՝ Միլանի Teatro alla Scala-ում, Նյու Յորքի Metropolitan Opera-ում եւ այլն: Նա համագործակցել է Հայաստանի Ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի եւ Հայաստանի Ազգային կամերային նվագախմբի հետ:

ՆՈՐ ՀՈԼՈՎԱԿ՝ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Երգիչ Անդրեն հուլիսի 8-ին նշում էր ծննդյան տարեդարձը: Այդ առիթով նա հանդիսատեսի դատին է հանձնել նոր տեսահոլավակ:

«Այսօր իմ ծննդյան օրն է ու ես ուզում եմ շնորհակալություն ասել ձեզ՝ իմ սիրելի հանդիսատես, որ միշտ իմ կողքին եք եւ ձեր սիրով միշտ ուժ եք տալիս ինձ: Իմ ծննդյան օրը ձեզ եմ նվիրում իմ նոր տեսահոլովակն ու երգը՝ «Սիրո Մետրո»-ն: Թող այն ջերմացնի ձեր սրտերը: Սիրում եմ ձեզ շատ»,- ֆեյսբուքյան իր էջում գրել է Անդրեն:

Երգի խոսքերի հեղինակը Միհր Պետրոսյանն է, երաժշտության հեղինակը՝ Վարդան Գալստյանը, տեսահոլովակի ռեժիսորը Եղիշե Սողոմոնյանն է:

ՓԱՌԱՏՈՆԸ ԿՄԵԿՆԱՐԿԻ ՀԱՅ ՌԵԺԻՍՈՐԻ ՖԻԼՄՈՎ

Փարիզաբնակ կինոռեժիսոր Թամարա Ստեփանյանի «Արտոյի երկրում» հայ-ֆրանսիական լիամետրաժ ֆիլմի պրեմիերայով կմեկնարկի Լոկառնոյի հեղինակավոր միջազգային կինոփառատոնը:

Այս մասին Ստեփանյանը հայտնել է «Ֆեյսբուք»-ի իր պաշտոնական էջում հրապարակված գրառմամբ: Նա նշել է, որ «Արտոյի երկրում» ֆիլմն իր առաջին լիամետրաժ կինոնկարն է: Լոկառնոյի կինոփառատոնի բացմանն այն կցուցադրվի «Գրանդե» հրապարակում 8 հազար հանդիսատեսի համար: «Ուրախություն, հպարտություն, արցունքներ: Դա շատ կարեւոր է Հայաստանի՝ իմ հայրենիքի համար», - գրել է ռեժիսորն ու շնորհակալություն հայտնել ֆիլմի ստեղծագործական կազմին, աջակիցներին այն ստեղծելու համար: Լոկառնոյի միջազգային կինոփառատոնը 2025-ին կանցկացվի օգոստոսի 6-16-ը:

ՄԱՐՔԱԿԱՆ

ՄԱՐՔԻՉԸ ԴՈՒՐՍ Է ԸՆԿԵԼ ՕԿՏԱԳՈՆԻՑ

UFC-ի թեթեւ քաշային կարգի դասակարգման երկրորդ համար Արման Ծառուկյանը սոցիալական ցանցերում կիսվել է մարզումների զվարճալի դրվագով, որը արագ տարածվել է համացանցում:

Սպարինգի ժամանակ Ծառուկյանը ոտքով հարված է հասցրել, ինչից հետո մարզիչը կորցրել է հավասարակշռությունը եւ ընկել օկտագոնից դուրս:

«Ինչ-որ մեկը կարո՞ղ է փակ պահել վանդակը», - տեսանյութին կից գրել է հայ մարզիկը:

ՈՒԵՖԱ-Ն ՏՈՒԳԱՆԵԼ Է ՄԲԱՊԵԻՆ

ՈՒԵՖԱ-ն պատժամիջոցներ է կիրառել Մադրիդի «Ռեալի» երեք խաղացողների նկատմամբ՝ Չեմպիոնների լիգայի 2024/25 մրցաշրջանի 1/8-րդ եզրափակիչի Մադրիդի «Ատլետիկոյի» դեմ պատասխան խաղից հետո (0:1, 11 մետրանոցներով՝ 4:2):

Ինչպես հաղորդում է AS-ը, «սերուցքայինների» հարձակվող Կիլիան Մբապեն տուգանվել է 30,000 եվրոյով, պաշտպան Անտոնիո Ռյուդիգերը՝ 40,000 եվրոյով, իսկ կիսապաշտպան Դանիել Սեբալյոսը՝ 20,000 եվրոյով:

Հիշեցնենք, որ ֆուտբոլիստները մեղադրվել են մրցակցի երկրպագուներին սադրելու համար: Բացի այդ, երեքն էլ ավելի վաղ ստացել էին պայմանական որակազրկում՝ մեկ խաղով, ՈՒԵՖԱ-ի հովանու ներքո անցկացվող մրցաշարերում, եւ այդ որակազրկումը կգործի, եթե նման խախտում կրկնվի:

«ՅԱՄԱԼԸ ՉՊԵՏՔ Է ՍՏԱՆԱ ՈՍԿԵ ԳՆԴԱԿԸ». ՄԱԿԵԼԵԼԵ

Ֆրանսիայի հավաքականի եւ Մադրիդի «Ռեալի» նախկին կիսապաշտպան Կլոդ Մակելելեն ասել է, որ 2025 թվականի «Ոսկե գնդակը» պետք է նվաճի ՊՍԺ-ի եզրային հարձակվող Ուսման Դեմբելեն, ինչպես նաեւ բացատրել է, թե ինչու «Բարսելոնայի» 17-ամյա հարձակվող Լամին Յամալը չպետք է նվաճի հեղինակավոր մրցանակն այս տարի:

«Ո՞ւմ կտայի «Ոսկե գնդակը»: Իհարկե՝ Դեմբելեին: Լամինը դեռ պետք է իր արժեքը ապացուցի ավելի երկար ժամանակահատվածում: Ուսմանն ավելի վաղ է սկսել: Եթե հիմա այն տանք այս փոքրիկ Լամինին ....(ծիծաղում է) Նա դեռ շատ բան ունի ապացուցելու, պետք է ավելին ցույց տա: Եկեք նրան հանգիստ թողնենք, նա դեռ երիտասարդ ու շատ տաղանդավոր է»,- Մակելելեի խոսքերն է մեջբերում AS-ը:

Հիշեցնենք, որ 2025 թվականի «Ոսկե գնդակի» մրցանակաբաշխությունը կկայանա սեպտեմբերի 22-ին՝ Փարիզի Շատլե թատրոնում: Թեկնածուների անունները կհայտարարվեն օգոստոսին:

● Հուլիսի 19-ին՝ 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կբեմադրվի «Տիկնայք եւ պարոնայք» կատակերգությունը: Տոմսերի արժեքը՝ 3000, 4000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՎԱՐԿԱՅԻՆ

ՀԱՐՑ. Իրավունք ունի՞ գրավառուն (բանկ, վարկային կազմակերպություն, գրավատուն) առանց դատարանին տեղյակ պահելու (ծանուցելու) վաճառել գրավ դրված գույքը:

Կարեն Մինասյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ չի կարող: Եթե գրավի պայմանագրով կամ գրավառուի եւ գրավատուի միջեւ կնքված գրավոր համաձայնությամբ առկա է դրույթ՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին, ապա գրավառուն պարտապանի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտավոր է գրավոր՝ պատշաճ ձեով ծանուցել պարտապանին առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում)՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249 հոդվածի 2-րդ մասի:

Միաժամանակ հայտնում ենք, որ նույն հոդվածը սահմանում է նաեւ, որ բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո գրավառուն իրավունք ունի իրացնելու գրավի առարկան: Վերոնշյալ համաձայնության բացակայության դեպքում գրավ դրված գույքի հաշվին գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարվում են դատարանի վճռով:

Այսպիսով, ֆինանսական կազմակերպությունը պետք է պարտապանին գրավոր ծանուցի գրավադրված գույքի իրացման վերաբերյալ, որից երկու ամիս հետո միայն կարող է իրացնել գույքը:

Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնում ենք, որ եթե կողմերի միջեւ կնքված պայմանագրով սահմանված է տույժի վճարման չափ եւ կարգ, ապա ֆինանսական կազմակերպությունն իրավասու է կիրառել դրանք մինչեւ պարտավորությունների ամբողջական մարումը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Որո՞նք են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված ամուսնությունների ճանաչումները:

Էրիկ Սաղաթելյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների միջեւ ամուսնությունները եւ Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց միջեւ ամուսնությունները, որոնք կնքվել են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ պահպանելով այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, Հայաստանի Հանրապետությունում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում:

ՀՀ արտաքին գործերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնում ենք, որ օտարերկրյա քաղաքացիների միջեւ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված ամուսնությունները, եթե պահպանվել է այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, Հայաստանի Հանրապետությունում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

«Իմ հետեւից մի արի, ես ուրիշ տեղ եմ գնում»:

Ում համար մոլորեցնող, ում համար օգտակար խորհուրդ: Բայց մի բան հստակ է. զվարճալի գրությամբ այս մեքենան Երեւանում բոլորի ուշադրությունն է գրավում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+10 + 14 +24 + 28
Կոտայքի լեռներ	+10 + 13 +24 + 27
Կոտայքի նախալեռներ	+16 + 19 +28 + 31
Գեղարքունիք	+ 8 + 13 +20 + 24
Լոռի	+10 + 14 +23 + 26
Տավուշ	+17 + 20 +28 + 31
Արագածոտնի լեռներ	+10 + 13 +22 + 25
Արագածոտնի նախալեռներ	+15 + 19 +29 + 32

Արարատ	+18 + 21 +33 + 35
Արմավիր	+17 + 20 +33 + 35
Վայոց ձորի լեռներ	+10 + 13 +20 + 23
Վայոց ձորի նախալեռներ	+16 + 20 +32 + 35
Սյունիքի հովիտներ	+18 + 22 +28 + 31
Սյունիքի նախալեռներ	+13 + 16 +23 + 27
ԼՂՀ	+18 + 22 +29 + 31
Երեւան	+26 + 28 +32 + 35

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **9.7.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*